ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

Պրոֆ. ՇԱՎԱՐՇ ԹՈՐԻԿՅԱՆ (Լոնդոն)

Միջազգային իրավունքը կարելի է սահմանել որպես պետություններու փոխհարաբերությունները դասավորող և կանոնավորող նորմերու ամբողջություն։ Այս նորմերը, օրենքները կամ կանոնները ունեն երկու աղբյուրներ՝ մեկը սովորութենական, իսկ մյուսը՝ դաշնագրային։ Կան նաև օրենքի ընդհանուր սկզբունքները, որոնք ճանաչում ստացած են պետություններու կողմե։

Միջազգային իրավունքի այս հասկացողությունը կհիմնվեր պետական գերիշխանության հիմնական սկզբունքին վրա և ուրեմն կբացառվեին այն բոլոր հարցերը, որոնք ներքին կնկատվեին։

Ժամանակի ընթացքին և մեր քաղաքակրթական զարգացումի հետ միատեղ, այն հասկացությունը, թե միջազգային իրավունքը առնչված չէ ներքին հարցերու հետ, ունեցավ երկու կարևոր բացառություններ՝

ա. մարդկային իրավունքներ

բ. ժողովուրդներու ինքնորոշման իրավունք

Այս երկու բացառություններու ծիրեն ներս նաև զարգացավ «Մարդկության դեմ ոճիր» հասկացողությունը։

1. «Մարդկության դեմ ոճիր» հասկացողությունը

Կարգ մը ոճիրներ այնքան ծանր էին, որ անոնք կնկատվեին ոճիր մարդկության դեմ.

Օրինակ՝ Ծովահեններու պարագան։

Ծովահենը պատժելի էր որևէ պետության կողմե։

Ավելի ուշ՝ մարդկայնական միջամտությունները Եվրոպայի կողմե, երբ քրիստոնյաներ կշարդվեին Օսմանյան կայսրության սահմաններեն ներս, նույնպես զարգացուցին ոճիր մարդկության դեմ հասկացողությունը։

Ցայտուն օրինակներ այս միջամտության՝

ա. Ռուսաստանի միջամտությունը Մեծն Կատարինեի օրերուն, 1762—1774-ին, որոնք կհանգեին Կյուչյուք Քայնարճիի դաշնագրին (1774)։

բ. Հունաստանի ի նպաստ եվրոպական միջամտությունները Հունաստանի անկախության պատերազմին (1821—1831)։

գ. Խրիմի պատերազմեն ետք Թուրքիո պարտադրված բարենորոգումները, ինչպես նաև 30 մարտ 1856-ի Փարիզի դաշնագիրը։

դ. Մեծ պետություններու միջամտությունը քրիստոնյա Մարոններու ջարդերու առիթով Լիբանանի մեջ։ Այս միջամտությունը կհանգի Լիբանանի մեջ ինքնավարության, 9 հունիս 1861-ի կանոնագրության և քրիստոնյա ընդհանուր կառավարիչի մը նշանակումին։

** Այս և հաջորդ երկու հոդվածները (Ռ. Փիրումյանի և Ա. Պեյլերյանի), որպես զեկուցում կարդացվել են «Հայերի ցեղասպանություն, պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» միջազգային գիտաժողովում (1990 թ. ապրիլ, Երևան)։*

ե. Կրետեի ապստամբության (1866—68) առիթով Եվրոպական քննիչ հանձնախումբի մը ստեղծումը։

զ. Պոսնիայի և Հերցեկովինայի ապստամբությունը, Միդհատի սահմանադրությունը, մարտ 31, 1877-ի Լոնտոնի փրոթոկոլը և ռուս-թրքական պատերազմը 1877—78 թ.։ Սերպիա, Ռումանիա և Մոնթենեկրո կստանային անկախություն, Պուլկարիա կդառնար ինքնավար մարզ, իսկ Հայաստանին եխոստատվեր բարենորոգումներ Պերլինի 1878-ի դաշնագրով։

է. Զեյթունի (1882—1895) և Սասնո (1894 և 1904) ապստամբություններու և ջարդերու կապակցությամբ Եվրոպայի միջամտությունը և հյուպատոսական քննիչ հանձնախումբերու կազմությունը, ինչպես նաև մայիսյան ծրագիրը (1895)։

ը. Եվրոպայի միջամտությունը և հայկական բարենորոգումներու ծրագիրը զոր Օսմանյան կայսրությունը կընդուներ 1914 հունվար 26-ի համաձայնագրով։

թ. Դաշնակիցներու մայիս 24, 1915-ի հայտարարությունը ուղղված Օսմանյան իշխանություններուն, ուր կըսվեր. «Նկատի առած Թուրքիո այս նոր ոճիրը գործված մարդկության և քաղաքակրթության դեմ... օսմանյան կառավարության անդամները և անոնց գործակալները, որոնք դերակատարություն ունեցան այս ոճիրներուն մեջ, պիտի անձնապես պատասխանատու նկատվին»։

ժ. Հունվար 1919-ի Փարիզի խաղաղության խորհրդաժողովը և անոր հանձնախումբի մը կազմությունը մարդկության դեմ ոճիրով զբաղելու միտումով։ Հանձնախումբը կհիմնվեր Լահեի չորրորդ համաձայնագրին (1907) վրա, որ կհիշատակեր «մարդկային սկզբունքները մարդկության բարօրության համար»։

ժա. Այս հանձնախումբի աշխատանքներուն որպես հետևանք Սևրի դաշնագրին մեջ հոդվածներ զետեղվեցան հայկական ցեղասպանության պատասխանատուները դատելու և պատժելու համար (հոդվածներ 226 և 230)։

ժբ. Նյուրնպերկի 1946-ի դատավարությունները «մարդկության դեմ գործված ոճիրներու» հիման վրա։

ժգ. 1948-ի ցեղասպանության համաձայնագրի նախամուտը կհայտարարե, որ միջազգային սովորութենական իրավունքին մաս կկազմե ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ոճիր։ Նույնպես 1968-ի համաձայնագիրը անժամանցելի կդարձնե մարդկության դեմ ոճիրները։

Վերը նշված օրինակները ցույց կուտան, թե պետության մը կողմե իր իսկ քաղաքացիներուն հանդեպ գործված որոշ սխալները իրենց բնույթով այնքան դատապարտելի կնկատվեին, որ միջազգային ընտանիքը անոնց կնայեր իբրև մարդկության դեմ գործված ոճիրներ և կճշդեր տրամադրություններ՝ նման արարքներու պատասխանատու պետություն կամ անհատները պատժելու համար։

Միջազգային օրենքի այս սովորութենական կանոնի հիման վրա էր, որ Ա. աշխարհամարտի ընթացքին, երբ հայերու ջարդերը կգործադրվեին Թուրքերու կողմե, դաշնակիցները հայտարարություն մը կատարեցին այն իմաստով, որ ջարդերու ծրագրումին և գործադրության պատասխանատու թրքական կառավարության պաշտոնատարները պիտի դատվին և պատժվին պատերազմի վախճանին։

1946-ին, գերման պատերազմական գլխավոր ոճրագործներուն վերաբերող հարցի մասին Նյուրնպերկի ատյանին տված դատավճիռը կհանդիսանա լավագույն ապացույցը այն իրողության, թե սովորութենական միջազգային օրենքը կպարունակե կանոն մը, որ ցեղասպանությունը կսահմանե իբրև մարդկության դեմ գործված ոճիր մը և զայն կնկատե պատժելի՝ միջազգային օրենքի ներքև։ 8 օգոստոս 1945-ին դաշնակից պետությանց կողմե ստորագրված ուխտի 6-րդ հոդվածին մեջ, 6 հոկտեմբեր 1945-ի փրոթոկոլի բարեփոխությամբ, մարդկության դեմ գործված ոճիրները սահմանված էին իբրև «սպանություն, բնաջնջում, ստրկացում, տեղահանություն և այլ անմարդ-

կային արարքներ՝ գործված որևէ քաղաքային բնակչության հանդեպ, ցեղային թե կրոնական գետնի վրա...»։ Գերման ինքնապաշտպանության գլխավոր կետերեն մեկը այն էր, որ 1945-ի ուխտը կմշակեր նոր օրենք՝ սահմանումը կատարելով մարդկության դեմ գործված ոճիրներու, իսկ այդ օրենքը 1945-են առաջ գործված քայլերու կապակցությամբ կիրարկելով՝ փաստորեն անոր կու տար հետադարձ ուժ։ Օրենքի մը հետադարձ ուժ տալը խախտումն է բնական արդարության հիմնական օրենքներեն մեկուն։ Իբրև պատասխան՝ ատյանը կհաստատեր.

«Ուխտը իշխանության կամայական գործածություն մը չէ հաղթական աղդերու կողմե, այլ՝ ատյանի տեսանկյունով... անիկա արտահայտությունն է արարչագործության ժամանակեն ի վեր գոյություն ունեցող միջազգային օրենքին...»։

Այլ խոսքով՝ ատյանը կհաստատեր, թե ուխտը պարզապես բանաձևումն էր գոյություն ունեցող սովորութենական միջազգային օրենքին, այսինքն՝ անիկա նոր օրենք չէր մշակեր, այլ պարզապես կը հայտարարեր սովորութենական միջազգային օրենքի գոյություն ունեցող կանոնները։

Նույնպես, 11 դեկտեմբեր 1946-ի թվակիր իր թիվ 96 բանաձևին մեջ, Միացյալ աղդերու Ընդհանուր ժողովը հայտարարեց, թե «ցեղասպանությունը ոճիր մըն է միջազգային օրենքի համաձայն, կհակասե Միացյալ աղդերու ոգիին և նպատակներուն և դատապարտված է քաղաքակիրթ աշխարհի կողմե»։

Վերև տրված ապացույցները բավարար են, եզրակացնելու համար, որ 1946-ի նյուրնպերկյան դատավարություններեն և 1948-ի ցեղասպանության համաձայնագիրեն առաջ, միջազգային օրենքը ճանչցած էր ցեղասպանությունը իբրև քաղաքակիրթ աշխարհին կողմե դատապարտված ոճիր, պատժելի՝ միջազգային օրենքով։

1915-ի թրքական վայրագությունները, որոնք ծրագրված և գործադրված էին թրքական կառավարության կողմե ազգ մը բնաջնջելու միակ նպատակով և որոնք պատճառ դարձած էին մեկուկես միլիոն մարդոց մահվան (Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերու մեծամասնություն), վստահաբար ցեղասպանություն են այս բառին որևէ սահմանումով։ Ավելի. թրքական իշխանություններուն կողմե գործված ցեղասպանության այս արարքը կհանդիսանա ոճիր մը միջազգային օրենքի ներքև, քանի որ ցույց տրվեցավ արդեն, որ ցեղասպանության սահմանումը իբրև մարդկության դեմ գործված ոճիր, միջազգային օրենքով պատժելի, երկար ատենե ի վեր հաստատված կանոն մըն է, որ ամբորեն միաձուլված է միջազգային օրենքի ամբողջության։

2. 1948-ի ցեղասպանության համաձայնագիրը

Ցեղասպանության ոճիրին կապակցությամբ առնված կարևոր քայլը 9 դեկտեմբեր 1948-ին Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովին որդեգրված ցեղասպանության համաձայնագիրն էր, որ կպարունակեր հետևյալ տրամադրությունները։

«Ստորագիր կողմերը, նկատի ունենալով 11 դեկտեմբեր 1946-ի թվակիր Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովին թիվ 96 (1) բանաձևումով կատարված հայտարարությունը, որուն համաձայն ցեղասպանությունը ոճիր է միջազգային օրենքով և կհակասե Միացյալ ազգերու ոգիին ու նպատակներուն և դատապարտված է քաղաքակիրթ աշխարհին կողմե,

ընդունելով որ պատմության բոլոր շրջաններուն ցեղասպանությունը մեծ կորուստներ պատճառած է մարդկության, և

համոզված որ, մարդկությունը նման դատապարտելի աղետե մը ազատագրելու համար, միջազգային գործակցությունը պահանջ է,

անդամները կհամաձայնին հետևյալ կետերուն շուրջ.

Հոդված 1.—Ստորագիր կողմերը կհաստատեն, թե ցեղասպանությունը, անկախ որ ե՞րբ, պատերազմի՞ թե խաղաղության ատեն գործադրված է, միջազգային օրենքով ոճիր մըն է, որուն արգիլման ու պատժումին հանձնառու կրլլան։

Հոդված 2.—Ներկա համաձայնագրին մեջ ցեղասպանություն կնշանակե հետևյալ արարքներեն որևէ մեկը, որ կգործադրվի ազգային, տոհմային, ցեղային կամ կրոնական խումբ մը ամբողջությամբ կամ մասամբ կործանելու դիտավորությամբ, ինչպես՝

Ա. Խումբի անդամները սպաննել։

Բ. Խումբի անդամներուն պատճառել մարմնական թե մտային լուրջ վնաս։

Գ. Դիտակցաբար խումբը մատնել կյանքի այնպիսի պայմաններու, որոնք կմիտին անոր ամբողջական թե մասնակի ֆիզիքական կործանումին։

Դ. Պարտադրել միջոցառումներ, որոնք կմիտին արգիլել խումբեն ներս ծնունդներու։

Ե. Խումբին մանուկները բռնությամբ փոխանցել այլ խումբի մը։

Հոդված 3.—Պատժելի պիտի ըլլան հետևյալ արարքները.

ա. Ցեղասպանություն։

բ. Ցեղասպանություն գործելու դավադրություն։

գ. Ցեղասպանություն գործելու ուղղակի կամ հրապարակային դրդություն։

դ. Ցեղասպանություն գործելու փորձ։

ե. Ցեղասպանությունը գործակցելու փորձ։

Հոդված 4.—Ցեղասպանություն կամ հոդված 3-րդով հիշատակված մյուս արարքներեն որևէ մեկը գործող անհատները պիտի պատժվին, անկախ այն իրողութենեն, թե անոնք սահմանադրականորեն պատասխանատու իշխողնե՞ր են, հանրային պաշտոնյանե՞ր, թե մասնավոր անհատներ։

1948-ի ցեղասպանության համաձայնագիրը ուղղակիորեն կառնչվի 1915-ի հայկական ջարդերուն, որովհետև անոնք դերազանցապես կհամապատասխանեն ցեղասպանության ոճիրին։ Հայկական հարցը միանգամընդմիշտ լուծելու նպատակով և Կեդրոնական Ասիո ու Կովկասի Թուրքերուն հետ միանալու իրենց փանթուրանական փառամոլ ծրագիրը իրականացնելու համար՝ հայ ժողովրդի ընաջնջման ծրագրի ղեկավարությամբ ընթացքին Թրքական իշխանությունները գործածեցին այնպիսի միջոցներ, որոնք կգերազանցեն երևակայությունը բոլորին, մինչև իսկ անոնց՝ որ մշակեցին ցեղասպանության համաձայնագիրը։ Պետական արխիվները, ականատեսի վկայություններ, պատմագրաններու գործերը, ինչպես նաև Թրքական զինվորական տոյանին (1919) ներկայացուցած փաստաթուղթերը կվկայեն, թե 1915-ի տեղահանություններն ու ջարդերը ծրագրված և գործադրված էին օսմանյան իշխանություններու կողմե։

Թիվ 2 և 3 հոդվածներու տրամադրությանց համապատասխանող անհամար ոճիրներ գործված են, և այդ գծով՝ Թրքական իշխանությանց կողմե գործված հայկական ցեղասպանությունը կհանդիսանա մարդկային պատմության մեջ երբեմնի գործադրված ցեղասպանության ամենեն ամբողջական արարքը։

Կրնա առարկվիլ, որ ցեղասպանության համաձայնագիրը ընդունված էր 1948-ին, և, հետևաբար, զայն կիրարկել 1915-ի հայկական ջարդերուն գծով՝ կնշանակե անոր տալ հետադարձ ազդեցության ուժ։ Այս առարկությունը չի կրնար ոտքի մնալ հետևյալ հաստատումներու լույսին տակ.

1. Ցեղասպանության համաձայնագրի ներածականեն և Նյուրնպերկի դատավարություններեն տեսանք արդեն, որ ցեղասպանությունը ոճիր է միջազգային օրենքի համաձայն և, հետևաբար, 1948-ի ցեղասպանության համաձայնագիրը պարզապես կհայտարարեր միջազգային օրենքի մեջ գոյություն ունեցող կանոններեն մեկը։

2. Նույնիսկ եթե չընդունեինք սովորութենական նման կանոնի մը գոյությունը, 1915-ի հայկական ցեղասպանությունը կհամընկնի 1948-ի հա-

մաձայնագրին, որովհետև, 1915-ին, թրքական իշխանություններուն կողմե գործադրված ցեղասպանությունը տակավին կշարունակվի։ Այսօրվան Թուրքիո ներքին շրջաններուն մեջ բնակող հայերը իրենց ինքնությունը աստիճանաբար կորսնցուցած են կամ կորսնցնելու ընթացքին մեջ կգտնվին։ Տակավին վերջերս թրքական թերթի մը մեջ կտեղեկագրվեր, որ Սասունի շրջանին հայ գյուղերեն մեկը ընդունած էր մահմետականությունը և իր եկեղեցին փոխված էր մզկիթի։ Նույնպես, Խորհրդային Հայաստանեն դուրս, այլ երկիրներու հայերը ենթակա են կամ ժամանակի ընթացքին պիտի ըլլան ենթակա իրենց մշակութային ինքնությունը կորսնցնելու վտանգին։ Ամեն անգամ, որ հայ մը կորսնցնե իր ինքնությունը, 1915-ի ծրագրված և գործադրության դրված ցեղասպանությունն է որ կշարունակե տալ իր պտուղները։ Այսօր Հայաստանեն դուրս բնակող հայերն իրենց ազատ կամքով չքեցին իրենց հողերը և, որովհետև ցեղասպանության համաձայնագրին գլխավոր նպատակն է արգելք հանդիսանալ ժողովուրդի մը բնի վերացումին, 1915-ին սկսած և ցարդ շարունակվող հայ ժողովուրդի աստիճանական բնաջնջումը կխախտե ցեղասպանության համաձայնագրին տրամադրությունները։

Օրենքի ընդհանուր սկզբունքն է որ՝ այնքան ատեն, որ սխալը կշարունակվի, օրենքը կիրարկելի է շարունակվող սխալին համար, նույնիսկ եթե սխալը սկսած է օրենքի հաստատումեն առաջ։

Նույն տրամաբանությամբ, մարդկային իրավանց պաշտպանության վերաբերյալ Միացյալ ազգերու ուխտին տրամադրությունները (վավերաթուղթ մը՝ որ պարտադիր է պետությանց համար և որ պարտականություններ կդնե անոնց վրա), ինչպես նաև Մարդկային իրավանց տիեզերական հայտարարությունը (որ կամբողջացնե և կբացատրե ՄԱԿ-ի ուխտի վերոհիշյալ տրամադրությունները և, առ այդ, շարունակություն է ուխտին) հավասարապէս կիրարկելի են հայության պարագային։

Հետևաբար՝ Միացյալ ազգերու կազմակերպության անդամ, կամ՝ 1948-ի ցեղասպանության համաձայնագրի ստորագիր և կամ՝ Մարդկային իրավանց տիեզերական հայտարարության ի նպաստ քվեարկած պետությանց պարտավորությունն է գործադրել իրենց հանձնառությունը՝ առնելով անհրաժեշտ քայլերը, որպեսզի վերջ տան հայ ժողովուրդի շարունակվող ցեղասպանության, արդարություն ընելով հայ ժողովուրդին և պահանջելով Թուրքիային, որ դարմանե 1915-ին գործած հանցանքը, որ կշարունակվի մինչև օրս, քանի ան կշարունակե պարտագրել հայերուն, որ ապրին իրենց պատմական հողերեն հեռու, ենթակա ձուլումի վտանգին։

Ավելի. այժմ կարելի է ապահովաբար շեշտել, որ միջազգային օրենքի մեջ գոյություն ունեցող սովորութենական կանոններով, 1948-ի ցեղասպանության համաձայնագրով, Միացյալ ազգերու ուխտին մարդկային իրավանց վերաբերյալ տրամադրություններով և 1948-ի մարդկային իրավանց տիեզերական հայտարարությամբ՝ ցեղասպանության ոճիրը տիեզերականորեն ընդունված ոճիր մըն է, նման՝ հելուզակության և, հետևաբար, անոր պատժումը մաս կկազմե միջազգային արդարադատության կամ հանրային կարգին (jus cogens)։

Հավելյալ ապացույց մը, որ ցեղասպանությունը պատժելի է անկախ իր գործադրության թվականեն, և որ անոր պատժումը մաս կկազմե միջազգային հանրային արդարադատության, այն է, որ Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովը 26 նոյեմբեր 1968-ի իր բանաձևով և համաձայնագրով, մերժեց սահմանափակումի սկզբունքը կիրարկել մարդկության դեմ գործված ոճիրներու պարագային և վճռեց անոնց անժամանցելիությունը։

Թեև բուն ցեղասպանության ծրագրումն ու գործադրությունը կատարված էր Օսմանյան կայսրության կողմե, այսուհանդերձ, ժամանակակից Թուրքիան, Օսմանյան կայսրության ժառանգորդն ու հաջորդը նկատվելով միջազգային օրենքի լույսին տակ, կստանձնե կայսրության բոլոր իրավունքներն ու պարտականությունները։ 1925-ին, Օսմանյան պարտքի իրա-

վատիրության գծով վճիռ մը արձակելով՝ իրավարար Պորել հաստատեց, թե Թուրքիա կշարունակեր նախկին Օսմանյան կայսրության անհատականությունը։

Ուստի, ատիկա պատասխանատվություն մըն է, որ կվերաբերի Թուրք պետության, առանց անպայման դատապարտելու Թուրք ժողովուրդը իբր ամբողջություն, կամ Թուրքը՝ իբր անհատ։

Բ. Ցեղասպանության անժամանցելիությունը։

Օրենքի մեջ գտնվող անժամանցելիության ըմբռնումը միջազգային ոճիրներու պարագային կիրարկելու հարցը քննության նյութ դարձած է Միացյալ ազգերու մոտ։ 26 նոյեմբեր 1968-ին Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովը ընդունեց պատերազմական ոճիրներու և մարդկության դեմ գործված ոճիրներու պարագային օրինական սահմանափակումներու անկիրարկելիության համաձայնագիրը։ Միացյալ ազգերու մեջ կատարված խորհրդակցությանց ընթացքին, պետությանց կողմե տիեզերական ճանաչում տրված և ընդունված էր այն օրենքը, որուն համաձայն՝ պատերազմական ոճիրներու և մարդկության դեմ գործված ոճիրներու պատասխանատու ոճրագործները պետք է հետապնդվին և պատժվին։

Համաձայնագրի թիվ 1 հոդվածը կրսե հետեյալը.

«Օրինական ոչ մեկ սահմանափակում պիտի կիրարկվի հետևյալ ոճիրներու պարագային, անկախ իրենց գործադրության թվականեն.—

Ա. Պատերազմական ոճիրները, ինչպես որ անոնք սահմանված են 8 օգոստոս 1945-ի Նյուրնբերկի զինվորական միջազգային ատյանի ուխտով, և ինչպես որ հաստատված են Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովին 13 դեկտեմբեր 1946-ի թիվ 3 (1) և 11 դեկտեմբեր 1946-ի թիվ 96 (1) բանաձևերով, հատկապես անոնք, որ հիշատակված են ռազմական զոհերու պաշտպանության վերաբերյալ 12 օգոստոս 1949-ի Ժնևի համաձայնագրին «ծանր անօրինություններու» շարքով։

Բ. Պատերազմի թե խաղաղության ատեն մարդկության դեմ գործված ոճիրները, ինչպես որ անոնք սահմանված են 8 օգոստոս 1945-ի Նյուրնբերկի զինվորական միջազգային ատյանի ուխտով, և ինչպես որ հաստատված են Միացյալ ազգերու Ընդհանուր ժողովին 13 դեկտեմբեր 1946-ի թիվ 96 (1) բանաձևերով. նույնպես, զինվորական հարձակումով թե գրավումով իրավազրկումը կամ ցեղային-խտրական քաղաքականության հետևանքով գրավումն ու անմարդկային արարքները, ինչպես և ցեղասպանության ոճիրի կանխարգելման և պատժումին 1948-ի համաձայնագրով սահմանված ցեղասպանության ոճիրը, նույնիսկ եթե նման արարքներ խախտում մը չեն նկատվիր գործադրության վայրի տեղական օրենքին համաձայն։

8 օգոստոս 1945-ի Նյուրնբերկի զինվորական միջազգային ատյանի ուխտին թիվ 6 (բ.) հոդվածը պատերազմական ոճիրներուն տվավ հետևյալ սահմանումը.

«Բ. Պատերազմական ոճիրներ.—Հատկապես՝ պատերազմի օրենքներուն և սովորույթներուն խախտումը։ Նման խախտումներ են (առանց որ այսքանով սահմանափակվին)՝ սպանությունը, հարստահարում կամ գրավյալ շրջաններու բնակչության տեղահանումը՝ ստրկային աշխատանքի թե այլ նպատակներով. պատերազմական բանտարկյալներու թե ծովու վրա գտնվող մարդոց սպանությունը կամ հարստահարումը. պատանդներու սպանությունը. հանրային թե սեփական ստացվածքներու կողոպուտը. ծաղաքներու և գյուղերու դիտումնավոր կործանումը և կամ զինվորական անհրաժեշտությամբ չարդարացվող պարպումը»։

Նյուրնբերկի ուխտին թիվ 6 (գ.) հոդվածին համաձայն, մարդկության դեմ գործված ոճիրներուն կտրվի հետևյալ սահմանումը.

«...Քաղաքային բնակչության դեմ գործված սպանություն, բնաջնջում, գերեվարում, տեղահանություն և անմարդկային այլ արարքներ, պատերազմեն առաջ թե անոր ընթացքին. կամ՝ քաղաքական, ցեղային և կրոնական պատճառներով հալածանք և կամ ատյանի արդարադատության տակ ինկող

որևէ ոճիրի գործադրություն թե այդ գծով մասնակցություն, անկախ այն իրողութենեն, թե ատիկա որքանով կխախտե գործադրության վայրի տեղական օրենքը»։

Ցեղասպանության ոճիրի կանխարգելման և պատժումին 1948-ի համաձայնագրին համաձայն ցեղասպանության տրված սահմանումը տեսանք արդեն։ Ցեղասպանության համաձայնագիրը հավելյալ կհաստատե, թե ցեղասպանությունը միջազգային ոճիր մըն է, խաղաղության թե պատերազմի ատեն գործադրված ըլլա ատիկա, և կիրարկելի է միաժամանակ թե՛ հանրային պաշտոնյաներուն և թե՛ անհատ քաղաքացիներուն համար։

Անմարդկային առաջին արարքը, որ կմասնավորվի թիվ 1 (ր.) հոդվածով իբրև մարդկության դեմ գործված ոճիր, «զինվորական հարձակումով կամ դրավումով կատարված իրավազրկումն» է։ Այս նախադասությունը որդեգրված է Արաբ Միացյալ Հանրապետության և Լիբանանի առաջարկով։ Անոր որդեգրումը զորավոր կերպով ընդունված էր բազմաթիվ ներկայացուցիչներու կողմե, «իբրև մարդկության դեմ այժմ գործվող ամենեն ահավոր ոճիրներուն անդրադարձող տրամադրություն»։

Թիվ 1 հոդվածը կվերաբերի պատերազմական բոլոր ոճիրներուն և մարդկության դեմ գործված ոճիրներուն՝ անցյալի, ներկայի թե ապագայի։ Վիճաբանությանց ընթացքին, որոշ պետություններ մինչև իսկ օրինական սահմանափակումներու անկիրարկելիությունը նկատեցին իբրև միջազգային պատժական օրենքի գոյություն ունեցող սկզբունքներեն մեկը, ինչ որ անհրաժեշտ կդարձներ միջազգային ընտանիքի պարզապես գիտակցումը այդ իրողության։ Իրենց կարծիքով, համաձայնագիրը ուներ բանաձևային բնույթ և պարզապես կվերահաստատեր իրավական հիմնական սկզբունք մը, որուն համաձայն ոճիր մը պատժելի է առանց ժամանակի սահմանափակումին, բացի այն պարագայեն, երբ հակառակը հաստատող տրամադրություն մը կա։ Եվ որովհետև պատերազմական ոճիրներուն և մարդկության դեմ գործված ոճիրներուն վերաբերյալ միջազգային բոլոր աղբյուրները լուռ էին ժամանցելության հարցին մասին, սահմանափակումի կանոն մը կարելի չէր կիրարկել բացահայտված տրամադրության մը բացակայության։

Համաձայնագրի հետադարձ ազդեցության խնդիրը որոշ պետությանց համար ներկայացուց սահմանադրական նկատառելի դժվարություններ, ոճրային օրենքի մեջ գոյություն ունեցող ոչ-հետադարձության սկզբունքին պատճառով։ Այսուհանդերձ, երբ Նորվեկիա բարեփոխությամբ առաջարկեց թիվ 1 հոդվածի ներածական նախադասությենեն ջնջել «անկախ անոնց գործադրության թվականեն» բառերը, ատիկա բուռն կերպով մերժվեցավ այն հիման վրա, թե ոչ-հետադարձության սկզբունքին բացառումը պետք է կատարվի խնդրո առարկա ոճիրներու բնույթին հատուկ քննարկումով։

Համաձայնագրի թիվ 2 հոդվածը կ'ըսե.

«Եթե թիվ 1 հոդվածով մատնանշված ոճիրներեն որևէ մեկը գործադրվի, այս համաձայնագրին տրամադրությունները պիտի կիրարկվին հանդեպ այն պետական իշխանություններուն կամ անհատ անձնավորություններուն, որոնք, իբրև գլխավոր հեղինակներ կամ գործակիցներ, կմասնակցին կամ ուղղակիորեն կգրգռեն ուրիշները նման ոճիր մը գործելու, կամ անոնց, որոնք կդավադրեն նման ոճիրներու գործադրության մեջ, անկախ անոր ամբողջացումին աստիճանեն, ինչպես նաև պետական իշխանությանց այն ներկայացուցիչներուն, որոնք կթույլատրեն անոնց գործադրությունը»։

Ուրեմն պետք է մատնանշվի, որ համաձայնագիրը կիրարկելի է բոլոր անհատներուն պարագային, անկախ անկե, որ իրենց անհատական հանգամանքով կգործեն, թե իբրև պետական հեղինակության ներկայացուցիչներ։ Վերջին պարագային անոնք պետք չէ գործնապես մասնակից ըլլան՝ կրավորական թույլտվությունը կամ անգործությունը բավարար է։

Ավելին. «ամբողջացման աստիճանեն անկախ» հաստատումը կնշանակե, որ համաձայնագիրը կվերաբերի ոճիրի մը գործադրության բոլոր աստիճաններեն, անցնելով հաջող կամ ձախող փորձերեն՝ մինչև ավարտած ոճիրը։

Համաձայնագրի թիվ 3 հոդվածը կպարտադրե կողմերուն, որ որդեգրեն տեղական անհրաժեշտ միջոցառումները, օրենսդրական թե այլ կարգի, որպեսզի միջազգային օրենքի հետ համաձայնաբար կարելի դարձնեն համաձայնագրի թիվ 2 հոդվածով ակնարկված անհատներու հանձնումը։ Հանձնումի որոշումը, ուրեմն, ձգված է խնդրո առարկա յուրաքանչյուր պետության։ Կողմերեն պահանջվածը այն է միայն, որ իրենց սահմանադրական ե վարչական գործընթացը ուղղեն այնպես, որ հանձնումը արտոնվի։

Թիվ 4 հոդվածով, պետություններ հանձն կառնեն ապահովել, որ թիվ 1 հոդվածով ակնարկված ոճիրներու օրինական սահմանափակությանց անկիրարկելիության սկզբունքը ազդեցության ուժ ստանա իրենց ազգային օրենսդրության մեջ։ Նորվեկիո կողմե առաջարկված բարեփոխումը (որ կուզեր չպարտադրել պետություններուն դատավճռումն ու պատժումը այն ոճիրներուն, որոնց սահմանափակման շրջանը ավարտած էր Համաձայնագրի վավերացման ժամանակ) մերժվեցավ։ Ասիկա կնշանակե, որ համաձայնագիրը կիրարկելի է նույնիսկ այն ոճիրներուն համար, որոնք դատված էին տեղական որոշ օրենքներու համաձայն, համաձայնագրի կյանքի կոչվելեն առաջ։

Համաձայնագիրը կյանքի կոչվեցավ 11 նոյեմբեր 1970-ին։

Հաստատելով, որ մարդկության դեմ գործված և պատերազմական ոճիրները դուրս կմնան ժամանցելիության հասողութենեն, «անկախ իրենց գործադրության թվականեն», համաձայնագիրը կ՚ընդարձակեր իր կիրարկելիության տեսլադաշտը մարդկության դեմ անցյալին գործված այնպիսի ոճիրներու վրա, ինչպիսին է հայկական ցեղասպանությունը։

3. Հայկական ցեղասպանությունը և ՄԱԿ-ի մարդկային իրավանց հանձնախումբը

1971-ին խտրականության արգիլման և փոքրամասնությանց պաշտպան ենթահանձնախումբը Միացյալ ազգերի կազմակերպության առաջարկեց պատրաստություն ուսումնասիրության մը ցեղասպանության աքտի արգիլման և պատժելու մասին։ Մարդկային իրավանց հանձնախումբ վավերացուց այս առաջարկը։ Ռուանտացի Ռուհաշանքիքո կնշանակվեր զեկուցագիրը այս աշխատանքին։ Ան անդամ էր ենթահանձնախումբին։

Ենթահանձնախումբը իր սեպտեմբեր 1973-ի ժողովին քննեց առաջին տեղեկագիրը, որուն 15-են 36 հոդվածները կպարունակեին պատմական մուտք մը։ Հոդված 30-ը կվերաբերեր հայկական ցեղասպանության և կ՚ըսեր.

«Գալով մեր դարաշրջանին, պետք է նկատի առնել գոյությունը ամբողջական փաստաթղթերու հայկական ջարդերու հետ առնչված, ջարդեր, որոնք բնորոշվեցան որպես քսաներորդ դարու առաջին ցեղասպանությունը»։

Հաջորդ տարվա մարտին, երբ մարդկային իրավանց հանձնախումբը կքններ ենթահանձնախումբի աշխատանքը, Թուրքիո ներկայացուցիչը հարձակեցավ ցեղասպանության տեղեկագրի 30-րդ պարբերության վրա, ըսելով, որ ան չէր արտահայտեր պատմական ճշմարտությունը, պատերազմական դեպքերը կնույնացներ ցեղասպանության հետ և անտեղի կերպով կվերարծարծեր ատելությունը կողմերու մոտ։ Ան կառաջարկեր ջնջել 30-րդ պարբերությունը։ Թուրք ներկայացուցիչի տեսակետը պաշտպանվեցավ Փաքիստանի, Իտալիո, Իրաքի, Ֆրանսայի, Թունիսի, Նիկերիո, Միացյալ Նահանգներու, Ավստրիո, Իրանի և Ռումանիո ներկայացուցիչներու կողմե։ Վիճաբանություններու ավարտին, Ավստրիացի էրմակորան հայտարարեց, թե ինք զեկուցաբերին պիտի փոխանցեր ժողովին արտահայտված տեսակետները, որպեսզի անոնք նկատի առնվին վերջնական տեղեկագրի պատրաստության ընթացքին։ Հանձնախումբը նաև կհանձնարարեր պատմական բաժնի, բացի վերջին շրջանի ցեղասպանություններեն (հրեական), ամբողջական ջնջումը։

Հայերը ամեն կողմե հակադարձեցին։ Զանազան հայկական կազմակերպություններ, մանավանդ Հայ ազգային մարմինը (Հ. Յ. Դ. Հայ Դատի հանձնախումբ) որոշեցին հակազդել ժողովներով, պատմագիտական ուսումնասի-

ությունները և մանավանդ հանձնախմբի և ենթահանձնախմբի ժողովներուն մասնակցելով զանազան ոչ-պետական կազմակերպություններու անունով։

Ենթահանձնախումբի 1975-ի ժողովը վերստին կզբաղեր ցեղասպանության տեղեկագրով։ Անդամներեն շատեր ըսին, թե պատմական բաժինը և 30-րդ պարբերությունը պետք է պահվեին և նաև կպաշտպանեին զեկուցաբերի անկախությունը։ Թուրքիոն ներկայացուցիչը վերստին քննադատեց տեղեկագիրը և 30-րդ պարբերությունը։ Եկեղեցիներու խորհուրդի ներկայացուցիչը (Շավարշ Թորիկյան) խոսեցավ 30-րդ պարբերությանը ջնջելու դեմ։ Ան ըսավ, թե շատ էին փաստերը հայկական ցեղասպանության հետ առնչված, որ պատմական ճշմարտությունները կարելի չէ անտեսել քաղաքական ճընշումներու որպես հետևանք և թե անցյալի դեպքերու ուսումնասիրությունը անհրաժեշտ էր ապագային նոր ցեղասպանությունները կանխարգելելու համար։

Ենթահանձնախումբի 1978-ի ժողովին ցեղասպանության տեղեկագիրը կներկայանար իր վերջնական ձևին մեջ։ 30-րդ պարբերությունը վերցված էր։ Ենթահանձնախումբի անդամներեն շատերը ցավ հայտնեցին այս հապավումին համար, ոչ-պետական կազմակերպություններու ներկայացուցիչներեն շատեր, ի մասնավոր Մարդկային իրավունքներու միջազգային դաշնակցության ներկայացուցիչը (Ժյուլ Վոլֆ) և փոքրամասնություններու իրավունքներու ներկայացուցիչ (Շավարշ Թորիկյան), արտահայտվեցան 30-րդ պարբերությունը պահելու մասին։

Հակառակ այս բոլոր արտահայտություններուն, զեկուցաբերը պաշտպանեց իր զեկուցագիրը, ըսելով, թե միջազգային համայնքին միությունը պահելու և տեղեկագիրը իր նպատակեն չշեղելու մտադրությամբ, ան տեղեկագրեն վերցուցած էր բոլոր պատմական տեղեկագրությունը, բացի հրեական ցեղասպանությենեն և եթե ժողովը կուզեր անտեսել բոլոր ցեղասպանությունները հիշատակությունը և քննությունը, որոնց կարգին նաև հայկականը, որի ուղղությամբ ժողովը պետք է որ նոր որոշում անցներ։

Տեղեկագիրը ուրեմն իր այդ ձևին մեջ ղրկվեցավ Մարդկային իրավանց հանձնախումբ առ ի քննություն։ Հանձնախումբեն ներս վիճաբանությունները ընթացքին Ավստրիո, Ֆրանսայի և Միացյալ Նահանգներու ներկայացուցիչները, որոնք 1974-ին պաշտպանած էին թրքական տեսակետը, խոսեցան 30-րդ պարբերությունը պահելու մասին։ Նույն տեսակետները հայտնվեցան Ավստրալիո, Կիպրոսի, Մարդկային իրավանց դաշնակցության և եկեղեցիներու խորհուրդի ներկայացուցիչներու կողմե։ Անոնք իրենց մտահոգությունը կհայտնեին ճշմարտությունը թաղելու փորձին ոմանց կողմե և այն ազդեցությունը, որ այս փորձը կրնա ունենալ մարդկության խղճին ինչպես նաև նոր ցեղասպանություններու կանխարգելման վրա։ Անշուշտ Թուրքիա և Փաքիստան կկրկնեին իրենց տեսակետները, թե տեղեկագիրը իր հայացքը պիտի ուղղեր դեպի ապագան և ավելորդ էր հիշատակել անցյալի պատահարները։

Վիճաբանություններու ավարտին, ժողովի նախագահ Կանատացի Պոլնը, իր եզրափակիչ խոսքերուն մեջ կըսեր. «Շատ նամակներ եմ ստացած զանազան երկրներե այս պատմական պարբերության մասին, որ ջնջված է ցեղասպանության տեղեկագրեն։ Ժնևի մեջ զանազան խմբակցություններ և անհատներ այս ուղղությամբ խոսեցան հետս։ Հակազդեցությունները այս ուղղությամբ ավելի մեծ եղան, քան ինչ որ տեղեկագրի հեղինակը կրնար երևակայել։

Արդ, կհուսամ պարոն Ռուհանշիաքիքոն նկատի կունենա այս բոլորը, ինչպես նաև հոս արտահայտված միտքերը, երբ ան տեղեկագիրին մեջ կկատարե վերջնական սրբագրությունները»։

ՄԱԿ-ի Մարդկային իրավունքներու բաժնի տնօրեն պարոն վան Պոլվենը քանի անգամներ կապի մեջ մտավ զեկուցարար Ռուհաշանքիքոյի հետ իրեն ուշադրության հրավիրելով Պոլնի հայտարարությունը, բայց պատաս-

խան չստացավ։ Տարիներ ետք, ժողովուրդներու մնայուն ատյանի առջև վան Պովեն (ապրիլ 1984, Փարիզ), կհայտարարեր.

«ա. Ցավալի է, որ սխալ հասկցված պետական շահերը, որոնք արտահայտվեցան Մարդկային իրավունքներու հանձնախումբի 1974-ի ժողովեն առաջ և այդ ժողովի ընթացքին, այնքան կարևոր դեր խաղացին հայ ժողովուրդի ողբերգությունը ծածկելու մեջ։

Բ. Ցավալի է նաև և վնասակար մարդկային իրավունքներուն, ինչպես նաև ժողովուրդներու իրավունքներուն, երբ պետական շահերը կվտանգեն մասնագետներու անկախությունը և պարկեշտությունը։

Գ. Անհատներու, խմբակցություններու և ոչ-պետական կազմակերպություններու հակազդեցության շնորհիվ, մարդկության խիղճը արթուն մնաց, պատմական ճշմարտությունը չթաղվեցավ, պետություններ սրբագրեցին իրենց կեցվածքը և նոր ճանապարհներ կբացվին ՄԱԿ-ի առջև ճշմարիտին և արդարին պաշտպանության համար»։

Որպես հետևանք զեկուցաբեր Ռուհաշանքիքոյի Մարդկային իրավունքներու բաժնին հետ իր կապերու խզումին, ենթահանձնախումբը նշանակեց Անգլիացի Ուիթեքըրը որպես զեկուցաբեր վերանայելու ցեղասպանության տեղեկագիրը։ Օգոստոս 1985-ի ժողովին Ուիթեքըրը կներկայացներ իր նոր տեղեկագիրը, որ տեղի կունենար նոր վիճաբանություններու։

Շատերը պաշտպանեցին զեկուցաբերը հայկական ցեղասպանությունը հիշատակած ըլլալուն համար, 24-րդ պարբերության ներքև. ըսին թե պատմության դասերը անհրաժեշտ էին աշխարհի խիղճը կենդանի պահելու համար և նոր ցեղասպանություններ արգիլելու համար։ Ոչ-պետական կազմակերպություններու ներկայացուցիչները միացան ըսելու, թե շատ են փաստերը ցույց տալու, թե հայկական ջարդերը կարելի է բնորոշել որպես ցեղասպանություն։

Ենթահանձնախումբը վերջապես քվեարկեց բանաձև մը, որ «նկատողության կառներ Ուիթեքըրի տեղեկագիրը և իր շնորհակալությունները և շնորհավորություններ կհայտներ իր առաջարկներուն համար»։

24-րդ պարբերությունը

«...Ուրիշ օրինակներու կարգին, որ կարելի է բնորոշել որպես ցեղասպանություն, կրնանք թվել հայերու շարդը Օսմանյան կայսրության մեջ 1915—16 թվականին»։ Ծանոթություններու մեջ կհիշատակվին շարք մը աղբյուրներ։

Հոս պետք է հիշատակել նաև ժողովուրդներու մնայուն ատյանի ապրիլ 16, 1984-ի վճիռը, որ կըսեր. «...Հայ ժողովուրդի բնաջնջումը ցեղասպանություններու և ջարդերու ճամբով կկազմե ցեղասպանության ոճիր ինչպես նաև մարդկության դեմ ոճիր, որուն համար Թուրք պետությունը պատասխանատու պետք է նկատվի»։

Եվրոպական խորհրդարանը ևս իր խոսքը ունեցավ հայկական ցեղասպանության մասին։ Հունիս 18, 1987-ին խորհրդարանը քվեարկեց բանաձև մը, որ կբնորոշեր որպես ցեղասպանություն այն «ողբերգական դեպքերը, որոնք պատահեցան 1915—16-ին հայերու դեմ Օսմանյան կայսրությունեն ներս», 1948-ի ցեղասպանության համաձայնագրի սահմանումով։ Բանաձևը կշարունակեր հայտարարելով, թե «պատմականորեն փաստված հայկական ցեղասպանությունը մինչև օրս ո՛չ արժանացած է քաղաքական դատապարտումի, ո՛չ ալ ստացած է համապատասխան հատուցում»։

4. Կարելի բայլեր 1948-ի համաձայնագրի ներքև հայկական ցեղասպանության արծարծման համար

1948-ի ցեղասպանության համաձայնագիրը կճշդե, թե ստորագիր պետությունները կընդունին Արդարության միջազգային ատյանին դիմել, երբ վեճ կծագի համաձայնագրին շուրջ։ Համաձայնագրի 9-րդ հոդվածը կըսե.

Ներկա համաձայնության մեկնաբանության, կիրարկումին կամ գործադրության վերաբերյալ ստորագիր կողմերու միջև ծագած վեճերը (ներառ-

յալ անոնք, որ կառնչվին պետության մը պատասխանատվության՝ ցեղասպանության կամ թիվ 3 հոդվածով հիշատակված այլ արարքներու գծով), պետք է ներկայացվին Արդարության միջազգային ատյանին, կողմերեն ոևէ մեկուն պահանջով։

Թուրքիա ստորագիր պետություն մըն է։ Ուրիշ որևէ ստորագիր պետություն, ուրեմն, կրնա պահանջել Թուրքիայեն, որ կատարե համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները, իսկ մերժումի պարագային՝ հարցը կրնա տանիլ Արդարության միջազգային ատյանին։

Այս ուղղությամբ պետք է ըսել, թե ըլլա ցեղասպանության 1948-ի համաձայնագրի գործադրության կապակցությամբ, ըլլա հայկական հարցի հետապնդման մեջ ընդհանրապես, Խորհրդային Միությունը ավելի դեր պետք է կատարե և նախաձեռնություններու դիմե։ Իրավականորեն, քանի Հայաստանը անդամ է խորհրդային դաշնակցային պետության, այս վերջինն է, որ միջազգային իրավունքի ներքև կներկայացնե Հայ դատը։

Առաջին հերթին աշխատանք պետք է տարվի ՄԱԿ-ի Մարդկային իրավանց հանձնախումբեն և անոր ենթահանձնախումբեն ներս, որպեսզի 1948-ի համաձայնագիրը ենթարկվի հետևյալ փոփոխություններու։

Ա. Գործադրությունը համաձայնագրի 6-րդ հոդվածին, որ կնախատեսե Միջազգային քրեական ատյանի մը հիմնադրությունը.

Բ. Համաձայնագիրը պետք է պարբակե մասնավոր տրամադրություն հատուցման մասին, ինչպես նաև բռնագրավված հողերու և ինչքերու վերադարձվելու մասին.

Գ. Համաձայնագիրը պետք է ընդգրկե նաև մշակութային ցեղասպանությունը (հուշարձաններու քանդում, արգելք լեզվի, կրոնի, դպրոցներու վրա)։ Կարելի է ժողովուրդ մը անհետացնել ճնշելով անոր մշակույթն ու լեզուն.

Դ. Համաձայնագիրը պետք է նաև բովանդակե տրամադրություններ մթնոլորտային ապականության դեմ։ Կարելի է նաև ժողովուրդ մը բնաջնջել մթնոլորտային վտանգավոր պայմաններ ստեղծելով.

Ե. Կանխարգելելու համար ցեղասպանությունը, պետք է տրամադրություններ ստեղծել համաձայնագրեն ներս, պատժելու պատմությունը խեղաթյուրողները, ինչպես նաև մնայուն հսկողության դրություն մը ստեղծելու, նախատեսելու ցեղասպանությունները և անոնց պատահելեն ետք պատրաստ կառույցը ունենալու անմիջապես ստանալու ՄԱԿ-ի զանազան մարմիններու և միջազգային Կարմիր խաչի օժանդակությունը։